ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/99

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 23.11.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/99 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 23.11.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից քարթրիջների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/023» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ /այսուհետ նաև՝Աճուրդ/:

Աճուրդին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 28□10□2018թ□ հայտ է ներկայացրել նաև «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն /այսուհետ նաև Ընկերություն/:

Ընկերությունը Աճուրդի 5-րդ չափաբաժնի համար վերջնական արդյունքում ներկայացրել է 1 237 500 ՀՀ դրամ գնային առաջարկ /ըստ աճուրդով ներկայացված ցանկի/:

Վերը նշված չափաբաժնի համար որպես նախահաշվային գին սահմանվել է 5 000 000 ՀՀ դրամը:

Նույն չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցնող մասնակիցը ներկայացրել է 4 992 000 ՀՀ դրամ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 06.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 15.11.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 5-րդ չափաբաժնի մասով հաղթող /ընտրված/ մասնակից է ճանաչվել Ընկերությունը:

Պատվիրատուն 15.11.2018թ. www.gnumner.am կայքում հրապարակել է <<ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/023>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանել է 10 օրացուցային օր անգործության ժամկետ:

Ընկերությունը բողոքի իրավական հիմքեր նշել է հետևյալը.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումն իրականացվում է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով, եթե գնման առաջկան ներառված է սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ցուցակում:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝

հրավերով նախատեսվում են նաև, որ մասնակցի հայտը ներառում է միայն գնային առաջարկը: Ընդ որում, մասնակիցը գնային առաջարկ կարող է ներկայացնել, եթե բավարարում է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին: Գնային առաջարկը ներկայացնելը համարվում է սույն ենթակետով նախատեսված պահանջներին մասնակցի տվյալների համապատասխանությունը հավաստող հայտարարություն:

Նույն կարգի 12-րդ կետի համաձայն՝ հայտերն ներկայացնելու ժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն ավտոմատ ծանուցման միջոցով հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը, ինչպես նաև նոր (վերանայված) գներ ներկայացնելու վերաբերյալ առաջարկություն: Առաջարկությունը ներառում է նաև տեղեկություններ էլեկտրոնային աճուրդի բացման օրվա ու ժամի և օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալների մասին:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:

Կարգի 19-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցով ներկայացված գնային առաջարկներն աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ գերազանցում են ընթացակարգի արդյունքում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար գնման հայտով սահմանված գինը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 34-րդ հոդվածի

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու

օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ընկերությունը հայտնել է, որ <ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված էլեկտրոնային աճուրդի մի շարք չափաբաժիններին:

Իր մասնակցած բոլոր չափաբաժինների մասով, բացառությամբ 5-րդ չափաբաժնից՝ <<ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն ներկայացրել է ապրանքների նախահաշվային գներին մոտ գներ, որը իր միրցակից բոլոր մասնակիցներից ավել է: Սակայն զարմանալիորեն երբ ստացվում է Աճուրդի թիվ 2 արձանագրությունը, պարզվում է, որ Ընկերությունը ներկայացրել է ապրանքի նախահաշվային գնից ցածր գնային առաջարկ, որը հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցից մոտ չորս անգամ ցածր է: Ընկերությունը նշել է, որ այստեղ առկա է համակարգային որևէ սխալ, քանի որ Ընկերությունը չէր կարող բոլոր չափաբաժինների մասով ներկայացներ բոլորից բարձր՝ նախահաշվային գներին մոտ գնային առաջարկ և հանկարծ 5-րդ չափաբաժնի մասով ներկայացներ չորս անգամ ավելի ցածր գին:

Ընկերությունը հայտնել է, որ <<ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն տեղեկանալով նշված խնդրի մասին այլ տարբերակ չունենալու պարագայում շարունակել է Աճուրդին իր մասնակցությունը, այն պատճառով, որ հնարավոր կլինի մինչև սույն աճուրդի ավարտը ստանալ որևէ պարզաբանում նշված հարցը կարգավորելու համար: Սակայն, Աճուրդի հանձնաժողովի կողմից Ընկերությունը ճանաչվում է հաղթող մասնակից և դրա արդյունքում հրապարակվում է պայմանագիր կնքելու մասին որոշումը և սահմանվում է անգործության 10 օր ժամկետ:

Ընկերությունը ներկայացված բողոքով պնդել է, որ Աճուրդի 5-րդ չափաբաժնի համար ներկայացված գինը չի համապատասխանում իրականությանը և <<ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի կողմից նման գնայի առաջարկ չի ներկայացվել, այլ համակարգային խնդրի պատճառով տեղի է ունեցել որևէ սխալ:

Միաժամանակ Ընկերությունը հայտնել է, որ <<ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն սույն բողոքը մուտքագրելուց հետո, պատրաստվում է արդեն բողոքի շրջանակներում հարցում ներկայացնել լիազորված մարմին պարզաբանում ստանալու համար սույն գործի

վերաբերյալ: Ընկերությունը կարծում է, որ նշված խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ներկայացնել բողոք և բողոքի քննության ընթացքում լիազորված մարմին հարցումներ ներկայացնելով՝ պարզել գործի ողջ ընթացքը:

Ելնելով վերոգրյալից՝ <<ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից քարթրիջների ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/023>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել <<ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին 5-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու, հաղթող /ընտրված/ մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.11.2018թ. ժամը 10:15-ին և 30.11.2018թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, Ընկերությունը 30.11.2018թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև խնդրել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացված խնդրի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված տրամադրելու ողջամիտ ժամկետ:

<u>2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու) բողոքի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը՝

Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/023» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 5-րդ, 6-րդ և 11-րդ չափաբաժիններով հայտ է ներկայացրել «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից), որն արձանագրված է գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) թիվ 2

արձանագրությամբ: Նշված չափաբաժիններից 5-րդով Մասնակիցը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած՝ Հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ և, հաջորդաբար, ընտրված մասնակից՝ թիվ 4 արձանագրությամբ:

Այսպիսով, 5-րդ չափաբաժնի մասով, հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 13-րդ ենթակետով սահմանված կարգը, տեղեկագրում հրապարակվել է էլեկտրոնային աճուրդի պայմանագիր կնքելու մասին հայտարարություն, սահմանվել 10 օրացուցային օր անգործության ժամկետ և Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկն ու կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Հաշվի առնելով Մասնակցի՝ բողոքներ քննող անձին ուղղված բողոքի առանձնահատկությունը, այն է՝ էլեկտրոնային աճուրդի համակարգային սխալի մատնանշումը, կարծում ենք, որ նշված խնդրի ամբողջական լուծումը հնարավոր է միայն տվյալ համակարգը սպասարկող պատասխանատու անձանցից ստացված գրավոր տեղեկատվության հիման վրա: Պատվիրատուն գնման ընթացակարգի կազմակերպումը իրականացրել է համապատասխան օրենքների և օրենսդրական ակտերի շրջանակներում:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով 28.11.2018թ. ժամը 10:15-ին և 30.11.2018թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, Պատվիրատուն 30.11.2018թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/99 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/99 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից քարթրիջների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/023» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների Աճուրդի 1-ին, 5-րդ, 6-րդ և 11-րդ չափաբաժիններով հայտ է ներկայացրել նաև «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

2. 5-րդ չափաբաժնի համար որպես նախահաշվային գին սահմանվել է 5 000 000 ՀՀ դրամը:

3. Ընկերությունը Աճուրդի 5-րդ չափաբաժնի համար վերջնական արդյունքում ներկայացրել է 1 237 500 ՀՀ դրամ գնային առաջարկ:

4.Աճուրդի գնահատող հանձնաժողովի 06.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն:

5. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 15.11.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ 5-րդ չափաբաժնի մասով հաղթող /ընտրված/ մասնակից է ճանաչվել Ընկերությունը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ի 23.11.2018թ. բողոքը, բողոքի վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված դիրքորոշումը, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ի 10.12.2018թ. գրությանն ի պատասխան ներկայացված պարզաբանումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են***

գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումն իրականացվում է էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով, եթե գնման առարկան ներառված է սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված ցուցակում:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ***հրավերով նախատեսվում են նաև, որ մասնակցի հայտը ներառում է միայն գնային առաջարկը: Ընդ որում, մասնակիցը գնային առաջարկ կարող է ներկայացնել, եթե բավարարում է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին: Գնային առաջարկը ներկայացնելը համարվում է սույն ենթակետով նախատեսված պահանջներին մասնակցի տվյալների համապատասխանությունը հավաստող հայտարարություն:***

Նույն կարգի 12-րդ կետի համաձայն՝ հայտերն ներկայացնելու ժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն ավտոմատ ծանուցման միջոցով հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը, ինչպես նաև նոր (վերանայված) գներ ներկայացնելու վերաբերյալ առաջարկություն: Առաջարկությունը ներառում է նաև տեղեկություններ էլեկտրոնային աճուրդի բացման օրվա ու ժամի և օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալների մասին:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ ***աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի:***

Կարգի 19-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցով ներկայացված գնային առաջարկներն աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ

գերազանցում են ընթացակարգի արդյունքում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար գնման հայտով սահմանված գինը:

Աճուրդի հրավերի 7.4-րդ կետի համաձայն՝ Աճուրդի ընթացքում ըստ չափաբաժինների կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին այդ չափաբաժնի մասով ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Ընդ որում նվազեցվող գնային առաջարկները ներկայացվում են պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով, որը հաշվարկվում է քանակ x միավորի գին բանաձևով: Այն մասնակիցները, որոնք տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարեն ավելացված արժեքի հարկ, նվազեցվող գները ներկայացնում են առանց այդ հարկի գումարի հաշվարկման: Եթե տվյալ չափաբաժնի գծով աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում (30 րոպե) որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա 5-րդ րոպեն լրանալու պահի դրությամբ աճուրդը տվյալ չափաբաժնի մասով համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Աճուրդի հրավերի 7.6-րդ կետի համաձայն՝ Աճուրդի բոլոր չափաբաժինների արդյունքներն ամփոփվելուց անմիջապես հետո համակարգի հրապարակային էջի "Հայտեր բաժնում" ավտոմատ եղանակով հրապարակվում են ըստ յուրաքանչյուր չափաբաժնի համար սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար սահմանված գները, աճուրդի արդյունքում հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումներն ու վերջիններիս կողմից հայտով և աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ ներկայացված գները, դիմում-հայտարարությունները, ինչպես նաև այն մասնակիցների տվյալներն ու գնային առաջարկները, որոնք աճուրդի ամփոփման արդյունքում գերազանցել են սահմանված գները: Համակարգը սույն կետով նախատեսված տեղեկատվությունը միաժամանակ ավտոմատ եղանակով ուղարկում է գնահատող հանձնաժողովի անդամներին, քարտուղարին և հայտեր ներկայացրած մասնակիցներին:

Այսպիսով, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից քարթրիջների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/023» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների Աճուրդի 1-ին, 5-րդ, 6-րդ և 11-րդ չափաբաժիններով հայտ է ներկայացրել նաև «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Աճուրդի 5-րդ չափաբաժնի համար որպես նախահաշվային գին սահմանվել է 5 000 000 ՀՀ դրամը:

Ընկերությունը Աճուրդի 5-րդ չափաբաժնի համար վերջնական արդյունքում ներկայացրել է 1 237 500 ՀՀ դրամ գնային առաջարկ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 06.10.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 15.11.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ 5-րդ չափաբաժնի մասով հաղթող /ընտրված/ մասնակից է ճանաչվել Ընկերությունը:

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ Աճուրդի 5-րդ չափաբաժնի համար ներկայացված գինը չի համապատասխանում իրականությանը և <<ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի կողմից նման ցածր գնայի առաջարկ չի ներկայացվել, այլ համակարգային խնդրի պատճառով տեղի է ունեցել որևէ սխալ:

Ընկերությունը վերը նշված խնդրի կարգավորման նպատակով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով պարզաբանել հետյալը.

1. հնարավոր է արդյոք համակարգային սխալի պատճառով կազմակերպության կողմից մուտքագրվի մեկ թիվ, իսկ համակարգում արտացոլվի մեկ նիշ ավել:

2. հնարավոր է պարզել՝ արդյոք նախատեսված չափաբաժնի մասով համապատասխան գումարը մուտքագրելուց հետո համակարգը ավտոմատ եղանակով այն բազմապատկի հրավերով նախատեսված ապրանքի քանակին:

3. հնարավոր է համակարգային սխալի պատճառով նշված չափաբաժինը պատվիրատուի կողմից հայտարարվի չկայացած, առանց մասնակցի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու:

Ի պատասխան վերը նշված հարցադրումների՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը համապատասխան գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գրությամբ բարձրացված խնդիրների վերաբերյալ պարզաբանում ստանալու համար ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է էլեկտրոնային աճուրդի Eauction համակարգը սպասարկող կազմակերպությանը: Վերջինիս կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/023» ծածկագրով ընթացակարգի 5-րդ չափաբաժնով «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ՝ 1 250 000 ՀՀ դրամ և 05/11/2018թ. կայացած հակադարձ աճուրդին ընկերությունը ժամը 10:01:14-ին կատարել է գնառաջարկի նվազեցում՝ ներկայացնելով 1 237 500 ՀՀ դրամ գնային առաջարկ և այդ տվյալները հասանելի են https://eauction.armeps.am/hy/public/tender_details/tid/660/code/%D5%8A%D4%B5%D4%BF-%D4%B7%D4%B1%D5%83%D4%B1%D5%8A%D5%81%D4%B2-18/023/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.2 ենթակետով նախատեսված է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Նույն հրավերի 2-րդ մասի՝ «Էլեկտրոնային աճուրդի հայտը պատրաստելու» հրահանգի 2-րդ բաժնի 2.1 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ներառում է՝ ըստ չափաբաժինների նշված գնային առաջարկ, որում գումարը նշվում է միայն թվերով: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով համակարգը հաշվարկում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Այդ նպատակով մասնակիցը պարտադիր կարգով գնային առաջարկում նշում է հարկի դրույքաչափը: Համակարգն ավտոմատ եղանակով գնային առաջարկում նշված թվերը ցույց է տալիս նաև տառերով: Վերջնական ձևավորված գնային առաջարկը՝ արտահայտված տառերով և թվերով, համակարգը ավտոմատ եղանակով ներկայացնում է մասնակցի հաստատմանը: Ընդ որում, գնային առաջարկը մասնակիցը կարող է լրացնել և հաստատել միայն իր կողմից հաստատված դիմում-հայտարարությունը համակարգ

ներբեռնելուց հետո տվյալ ընթացակարգի համար ստացված եզակի ծածկագիրը (PIN-կոդ) համակարգից ստանալուց հետո: Հայտը համարվում է համակարգի կողմից ընդունված, եթե մասնակիցը հաստատում է գնային առաջարկը: Նույն բաժնի 2.2 կետի համաձայն՝ ընթացակարգում հետագա գործողությունները, ներառյալ աճուրդի ընթացքում նվազեցվող գնային առաջարկների ներկայացումը, մասնակիցը կարող է իրականացնել բացառապես հրավերի 2-րդ մասի 2.1 կետում նշված եզակի ծածկագիրը (PIN-կոդը) օգտագործելու միջոցով: Մասնակիցը պատասխանատու է ծածկագրի անվտանգության ու գաղտնիության, ինչպես նաև՝ այդ ծածկագրով համակարգում ցանկացած գործողություն իրականացնելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ գրությամբ բարձրացված 1-ին և 2-րդ հարցերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

էլեկտրոնային գնումների համակարգը հիմք է ընդունում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները և վերջիններիս մասով որևէ փոփոխություն, այդ թվում՝ համակարգային սխալով պայմանավորված նիշերի ավելացում կամ ներկայացված գնային առաջարկի բազմապատկում հրավերով սահմանված ապրանքի քանակով, համակարգի կողմից ավտոմատ չի իրականացվում և այդպիսի գործառույթներ համակարգում նախատեսված չեն:

Ինչ վերաբերվում է գրությամբ բարձրացված 3-րդ հարցին՝ համակարգային սխալի պատճառով նշված չափաբաժինը պատվիրատուի կողմից չկայացած հայտարարելուն, ապա հայտնում ենք, որ ըստ համակարգը սպասարկող կազմակերպության՝ էլեկտրոնային աճուրդի համակարգում տվյալ ընթացակարգի մասով տեխնիկական խնդիրներ չեն արձանագրվել, իսկ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարում գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերը:

Այսպիսով, վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Ընկերության բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 23.11.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**